« 23 » նոյեմբեր 2026թ. No 6893 - Ա

«ԵՐԵԽԱՅԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ (ABCDE) ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱՅԻ, ՆՈՐԱԾՆԱՅԻՆ ԻՆՏԵՆՍԻՎ ԹԵՐԱՊԻԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2026թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»)
ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Թիրախային լսարան՝ բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 80 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՋ 10 տեսական և 38 գործնական կրեդիտ.
  դասավանդող Արինե Սաֆարլուին՝ ՇՄՋ 10 տեսական և 38 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 095-00-52-31

Տրիաժ, շնչուղիների անցանելիություն, շնչական անբավարարություն	
Օր 1	
1 ժամ	**Դասախոսություն** Առաջին 4 օրերի թեմաների վերաբերյալ նախաթեստի լրացում: Տրիաժ, բուժառուի անվտանգություն և ABCDE մոտեցումը: Մանկաբուժական տրիաժի իրականացում անհետաձգելի բուժօգնության ընդունարանում, վերակենդանացման սեղանի անհրաժեշտ միջոցների առկայության ստուգում: Ինկուբատոր և ջերմային միջավայր, նորածնի նույնականացման ապարանջան, ՆԻԹ բաժանմունքի վերակենդանացման սեղանի անհրաժեշտ միջոցների առկայության ստուգում: Մոնիտորների ազդանշաններ, կենտրոնականն երակի մուտք ունեցող հիվանդ, վերակենդանացման սեղանի անհրաժեշտ միջոցների առկայության ստուգում ՎԻԹ բաժանմունքում
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 2	
1 ժամ	**Դասախոսություն** A. Շնչուղիների անցանելիության գնահատում և հիմնական խնամքի իրականացում:

	Օտար մարմին շնչուղիներում, կրուպ, անաֆիլաքսիա՝ «վտանգավոր շնչառության» ճանաչում: Ուսի տակ դրվող գլանիկների օգտագործումը, քթի կանյուլաների և CPAP դիմակի դիրքը, քթի մաշկի ստուգում: Տրախեոստոմայի խնամք, ինտուբացված երեխայի շնչուղիների արտածծում փակ համակարգով
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 3	
1 ժամ	**Դասախոսություն** A. Շնչուղիների անցանելություն ապահովումը շտապ իրավիճակներում և ինտուբացված հիվանդի շնչուղիների խնամքի իրականացում: Անհետաձգելի ինտուբացիայի նախապատրաստման հաջորդական քայլերը, խողովակի չափի որոշումը ըստ տարիքի/քաշի: Նորածնի վերակենդանացման ընթացքում շնչառության ապահովման գործողությունների ալգորիթմի քայլերը, էնդոտրախեալ խողովակի խորության չափը շրթունքի մոտ: Ինտուբացված երեխայի ամենօրյա ստուգումներ, DOPE մոտեցումը վատթարացման դեպքում
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 4	
1 ժամ	**Դասախոսություն** B. Երեխաների շնչական անբավարարության գնահատում, անհաս երեխաների շնչառության գնահատումը: Շնչական անբավարարության գնահատումը բրոնխիոլիտի, ասթմայի և թոքաբորբի դեպքում: Ապնոէն անհաս մոտ, մռնչոց, SpO2 թիրախային ցուցանիշը անհասների համար: Շնչական անբավարարության նշանները, արյան թթվահիմնային հավասարակշռության գնահատման հիմունքները: Առաջին 4 օրերի թեմաների վերաբերյալ հետթեստի լրացում
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 5	
Շնչական աջակցություն, արյան շրջանառության գնահատում, նյարդաբանական վիճակի գնահատում	
1 ժամ	**Դասախոսություն** 5-8 օրերի թեմաների վերաբերյալ նախաթեստի լրացում B. Թթվածնային և շնչական աջակցություն Թթվածնի արագ մեկնարկ, ինհալացիոն դեղորայքի ներմուծում, տեղափոխում ՎԻԹ բաժանմունք: CPAP-ի խնամք, քթի մաշկի և լորձաթաղանթների պառկելախոցերի կանխարգելում, թթվածնային թունավորման վտանգը անհասների մոտ:

	Վենտիլյատորի ազդանշաններ, երեխայի ճիշտ դիրքավորում, բերանի խոռոչի խնամք, թոքերի արհեստական օդափոխությամբ պայմանավորված թոքաբորբի կանխարգելում
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 6	
1 ժամ	**Դասախոսություն** C. Արյան շրջանառության գնահատում: Ջրազրկում, սեպսիսի սքրինինգը տրիաժի իրականացման ընթացքում: Նորածնի սեպսիս, պորտային կաթետերներ, միզարտադրության հսկողություն: Ինվազիվ մոնիտորինգ, սրտի բնածին արատ ունեցող երեխաների խնամք
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարպամունք ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 7	
1 ժամ	**Դասախոսություն** C. Ներերակային մուտք, հեղուկներ և վազոակտիվ դեղեր: Ներոսկրային մուտքի տեղադրման աջակացություն, սեպտիկ վիճակում գտնվող երեխայի հեղուկի բոլուսային ներարկում: Միկրոդոզավորում, գլյուկոզի ինֆուզիա, պորտային կաթետերի խնամք: Վազոակտիվ ինֆուզիաների հսկում (տիտրումը՝ միայն փորձառու բուժքույրերի համար, բժշկի նշանակմամբ)
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 8	
1 ժամ	**Դասախոսություն** D. Նյարդաբանական գնահատում, ցավի գնահատում: Ջերմային ցնցումներ, գլխի վնասվածքներ, թունավորումներ: Նորածնի ցնցումների նրբին նշաններ, հիպոգլիկեմիա, նորածնի ցավի գնահատման սանդղակ (NIPS- Neonatal Infant Pain Scale): Սեդացված երեխայի գնահատում, ներգանգային ճնշում, նորածինների և փոքր երեխաների ցավի գնահատման վարքաբանական սանդղակ ՝ դեմք, ոտքեր, ակտիվություն, լաց, հանգստանալու կարողություն (FLACC (Face, Legs, Activity, Cry, Consolability)) 5-8 օրերի թեմաների վերաբերյալ հետթեստի լրացում
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 9	
Արտաքին զննում, դեղեր և լաբորատորիա, ինտեգրում	
1 ժամ	**Դասախոսություն**

	Ե. Արտաքին զննում, ջերմակարգավորում, մաշկի խնամք և մաշկի վարակների կանխարգելում: Վնասվածքներ, ցան՝ պետեխիալ/ոչ պետեխիալ, երեխայի նկատմամբ բռնության նշանների ճանաչում և ահազանգում: Ջերմային միջավայր, անհաս երեխայի մաշկի խնամք, դեղնության գնահատում: Ճնշումային վնասվածքներ անշարժ երեխայի մոտ, վերքերի և դրենաժների խնամք
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 10	
1 ժամ	**Դասախոսություն** Դեղերի անվտանգություն և լաբորատոր ցուցանիշներ Անհետաձգելի դեղամիջոցներ (ադրենալին, պարացետամոլ, ցավազրկողներ), քաշի հաշվարկ երեխային կշռելու անհնարինության դեպքում: Գենտամիցին/ամպիցիլին, վիտամին K, բիլիռուբին, գլյուկոզա: Սեդացիա և ցավազրկում, էլեկտրոլիտներ, արյան թթվահիմնային հավասարակշռություն
3 ժամ	**Գործնական աշխատանք** Նշված թեմաների վերաբերյալ գործնական պարապմունքներ ԱԲԲ, ՆԻԹ և ՎԻԹ բաժանմունքներում
Օր 11	
4 ժամ	**Գործնական աշխատանք** ABCDE սիմուլյացիա և հիվանդի տեղափոխում Մասնակիցներրը իրականացնելու են ծանր վիճակում գտնվող երեխաներին վերաբերող իրավիճակային խնդիրների դերախաղեր. դերախաղերը ներառելու են ԱԲԲ, ՎԻԹ, ՆԻԹ բաժանմունքների բուժքույրերի աշխատանքին առնչվող գիտելիքներն ու հմտությունները: Դերախաղերը գնահատվելու են ստուգաթերթիկների միջոցով
Օր 12	
4 ժամ	**Գործնական աշխատանք** Բուժքույրերի հմտությունների վերջնական գնահատում՝ խմբային իրավիճակային խաղերի դիտարկման միջոցով՝ըստ նախապես կազմած ստուգաթերթիկի: Բուժքույրերի գիտելիքների գնահատում՝ ավարտական թեստի միջոցով